

**«ԱԼՄԱՍ» ԲԲԸ
2009Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

- 1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է ընկերությունը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել ընկերության ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք ընկերության կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ավաստային գործիքների արտադրությունն է: Դրանցից են քար կտրող, հղկող, ապակի կտրող գործիքները: Հաշվետու եռամսյակում տեղի ունեցած էական հանգամանքն այն էր, որ ընկերությանն անհասկանալի պատճառներով նոյեմբեր ամսից սկսած պատվերներ հիմնականում չեն եղել:

Մանրաձախ գներով հաշվարկի դեպքում 2009 թ. 4-րդ եռամսյակի ընթացքում արտադրվել է 25,706,000 դրամի արտադրանք: Արտադրության հումքը (մետաղ, օլոֆ, պղինձ և այլն) Ընկերությունը հիմնականում ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից և Չինաստանից, չնայած հաշվետու եռամսյակում Ռ-Դ-ից հումք ձեռք չի բերվել: Հաշվետու եռամսյակում Չինաստանից ձեռք է բերվել 1,300,000 դրամի ավաստային փոշի: Արտադրանքի վաճառքի գները 2009 թ. 4-րդ եռամսյակի ընթացքում կայուն են եղել: 2009 թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում իրացվել է 22,864,000 դրամի արտադրանք: Արտադրանքի իրացումը հիմնականում լինում է տեղական շուկայում, չնայած հաշվետու եռամսյակում 621,900 դրամի արտադրանք արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն: Ընկերությունում առկա արտադրանքի մնացորդը 01.01.2009 թ. և 01.01.2010 թ. դրությամբ բերված է աղյուսակում.

Աղյուսակ 1

«Այնաստ» ԲԲԸ-ում առկա արտադրանքի մնացորդը (դրամ)

	Պահեստում	Խառնուրդ
01.01.2009 թ.	367,763,000	11,215,000
01.01.2010 թ.	378,978,000	-

Աղյուսակ 2

ԱՍՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2009 թ. IV ԵՌԱՄՍՅԱԿ

Ցուցանիշ	Հազ. դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	22,864
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-20,173
Իրացման ծախսեր	-340
Վարչական ծախսեր	-15,541
Գործառնական գործունեությունից շահույթ	-10,766
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ	-4,564
2009թ. IV եռ. գուտ շահույթ	-6,202
Հիմնական միջոցները 01.01.2010թ.	939,391
Կանոնադրական կապիտալը	418,217
Դեբիտորական պարտք	23,757
Կրեդիտորական պարտք	1,122,471

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2009թ.

Ցուցանիշի անվանումը	01.01.2010 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-224.3
Մեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-15.7 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-5.5 %
Զուտ շահույթի մարժա (NPM)	-95.6 %
Կապիտալի համարժեքության գործակից	33.0 %
Ֆինանսական կախվածության գործակից	203.4 %
Բացարձակ իրացվելության գործակից	0.0
Ընթացիկ իրացվելության գործակից	0.8
Ընդհանուր իրացվելության գործակից	19.5
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	5.2
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	70.6
Պաշարների շրջանառելիության գործակից	0.1
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	2889.7
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.1
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	4727.0

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, անորոշությունը, պայմանավորված է ԱՄՆ դոլարի կուրսի հետ: Արտարժույթի փոխարժեքային տարբերությունները կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

2) Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջող հաշվետու ժամանակաշրջանի համար:

Չնայած հորիզոնում չի երևում հետագա հնարավոր զարգացման ուղղությունները, Ընկերության կարծիքով 2010 թվականը ընկերության համար լինելու է հաջող տարի:

Ձեկույցը կազմելու պահի դրությամբ Ընկերությունում պատվերներ չկան: